

УДК 338.439.66

**ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀՀ-ՈՒՄ**

*ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ*

*ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» հեղազոտական կենտրոնի ավագ փորձագետ, պրոֆեսոր*

*ՍԵՐԳԵՅ ՄԵԼՈՅԱՆ*

*ՀԱԱՀ, Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի դոցենտ*

**Բանալի բառեր** – պարենային անվտանգություն, ինքնաբավություն, ինտեգրացում, առևտուր, ֆիզիկական և տնտեսական մատչելիություն, սննդամթերքի անվտանգություն, կորուստներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ .....	4
ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ .....	24
<hr/>	
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	34
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ.....	36
<hr/>	
АННОТАЦИЯ.....	38
ABSTRACT .....	40

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պարենային անվտանգությունը ազգային անվտանգության ամենակարևոր բաղադրիչներից մեկն է, որի ապահովմանն է միտված պետության ագրարային քաղաքականությունը, պարենի և գյուղատնտեսական հումքի արտաքին առևտրի կանոնակարգումն ու բնակչության գնողունակության բարձրացման միջոցառումների համակարգը: Միանգամայն տրամաբանական է, որ երկրի պարենային անվտանգությունը բազմագործոն երևույթ է և պայմանավորված է արտաքին ու ներքին կայունությամբ:

Անկախության հռչակումից հետո երկրի պարենային անվտանգությունը դարձել է Հայաստանի տնտեսական անվտանգության գլխավոր խնդիրներից մեկը: Եթե մինչև նախորդ դարի 90-ական թվականների վերջը ռազմավարական նշանակության պարենային մթերքների (հացահատիկ, շաքար, բուսական յուղ և այլն ) պակասը մասամբ լրացվում էր հումանիտար օգնության և ապրանքային վարկի միջոցով, ապա դրանից հետո խնդիրը լուծվում է գերազանցապես սեփական արտադրության և ներկրումների հաշվին:

Սույն հոդվածում դիտարկվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության և **COVID 19** համավարակի պայմաններում Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման հիմնական ուղիները: Հատկապես կարևորվում է ՀՀ ագրարային ներուժի արդյունավետ օգտագործումը, պարենի կորուստների նվազեցումը և ԵԱՏՄ շրջանակում պարենային անվտանգության միասնական հիմնադրամի ձևավորումը: Վերջինս կարող է հադիսանալ անդամ երկրների գյուղատնտեսական հումքի և պարենի առևտրի կայուն զարգացման երաշխիք:

# 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունեցող և տարածաշրջանային հակամարտությունների պատճառով արտաքին հաղորդակցության ուղիների (Ադրբեջանի և Թուրքիայի տարածքով ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհներ, Վրաստանից Աբխազիայի տարածքով Ռուսաստանի Դաշնություն) սահմանափակումներ ունեցող երկիր է: Ահա թե ինչու, այս պայմաններում տնտեսական առավելություն ունեցող պարենային մթերքների պահանջը տեղական արտադրության հաշվին և պակասը ներկրման միջոցով լրացնելու դասական սխեման և անխուսափելի է, և որոշակիորեն դիսկային: Բան այն է, որ ինչպես ցույց է տալիս նախորդ տարիների փորձը, պարենի միջազգային շուկայում դրսևորվող ճգնաժամային երևույթների և տարածաշրջանայի լարվածության սրման պայմաններում, խաթարվում է արտաքին առևտրի բնականոն ընթացքը: Ուստի, բոլոր դեպքերում նախապատվությունը պետք է տալ երկրի պարենային անկախության մակարդակի բարձրացմանը և տնտեսական ինտեգրացման շնորհիվ՝ ներմուծվող պարենամթերքների երաշխավորված ծավալների ապահովմանը: Այս առումով նկատելի աշխուժացում է նկատվում ԵԱՏՄ հարթակում: Վերջինիս շրջանակում Միասնական ինտերվենցիոն հիմնադրամ ստեղծելու վերաբերյալ ԵՏՀ – ի կոլեգիայի անդամ, նախարար Արտակ Քամալյանը նշում է, որ այդ միջոցառումը հնարավորություն կստեղծի ձևավորել պարենային շուկայի կայունացման հստակ կառուցակարգեր, կապահովի փոխադարձ երաշխավորված մատակարարումներ և կվերացնի ԵԱՏՄ ագրարային շուկայում առկա արգելքներն ու սահմանափակումները: «Սկզբնական փուլում խոսքը վերաբերվելու է ցորենին, իսկ հետագայում՝ մյուս ապրանքներին: Բայց դեռևս մենք գտնվում ենք սկզբնական փուլում. ապրանքների տեսակի և հիմնադրամի աշխատանքի կոնկրետ ժամկետների մասին կարող ենք խոսել, երբ ԵԱՏՄ բոլոր երկրները համաձայնեցնեն բոլոր

առանցքային պարամետրերը: Ռուսաստանի Դաշնությունը, Հայաստանը, Բելառուսը և Եվրասիական բանկը սկզբունքորեն համաձայնություն են տվել ինտերվենցիոն հիմնադրամի ձևավորման հիմնական կառուցակարգերին, մնում է մյուս անդամ երկրների համաձայնությունը: >><sup>1</sup>:

Կարևորելով ինտերվենցիոն հիմնադրամի գաղափարը, միաժամանակ պետք է նշենք, որ Հայաստանի պարենային անվտանգության երաշխավորը Հայաստանի Հանրապետությունն է: ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է, որ երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության զարգացման այնպիսի մակարդակ, որը երաշխավորում է բնակչության առողջ և ակտիվ կենսագործունեության համար առողջապահական (ֆիզիոլոգիական) նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը<sup>2</sup>: Այսինքն՝ երկրի պարենային անվտանգության **առաջին նախապայմանը** կենսապես կարևորագույն պարենային ապրանքների տեղական արտադրության անհրաժեշտ մակարդակի (ինքնաբավության) ապահովումն է, ներմուծման հաշվին պակասորդի լրացումը և պետական պարենային պահուստների ստեղծումը, **երկրորդ նախապայմանը** բնակչության բոլոր խավերի համար առնվազն ֆիզիոլոգիական նվազագույն նորմաներին համապատասխանող սննդի ձեռք բերման տնտեսական հնարավորությունների ապահովումն է, իսկ **երրորդ նախապայմանը**՝ օգտագործվող սննդամթերքի անվտանգությունն է:

Առաջնորդվելով այս պահանջներով, դեռևս 2002 թ. ընդունվել է «Պարենային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Այնուհետև, ՀՀ նախագահի 2011 թ. մայիսի 18-ի ՆԿ 91-Ն կարգադրությամբ հաստատվել է «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը», իսկ

<sup>1</sup> <https://tinyurl.com/4yyjnt8k>

<sup>2</sup> «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1113>

2011 թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ կառավարությունը ընդունել է «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1522-Ն որոշումը: Մինչ այդ ՀՀ կառավարությունը 2010 թ. նոյեմբերի 4-ին ընդունել էր «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը» և «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն որոշումը: Իսկ 2019 թ-ին ընդունվեց «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը»<sup>3</sup> :

Վերոհիշյալ իրավական ակտերով ոչ միայն կանոնակարգվում են ագրարային հատվածի իրավահարաբերությունները, այլև գիտական կանխատեսումների հիման վրա ներկայացվում է մինչև 2030 թ. ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսության զարգացման և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման տեսլականը: Այս իրավական ակտերով ձևակերպվեցին ՀՀ ագրարային քաղաքականության կարևոր հիմնադրույթները և կանխորոշվեցին երկրի պարենային անվտանգության ուղենիշերը:

Այդուհանդերձ, պարենային անվտանգության օրենսդրությունը տակավին պատշաճ կիրառություն չի գտնում: Դրա հիմնական պատճառը հաշվետվական և մշտադիտարկման կառուցակարգերի անկատարությունն է: Ահավասիկ, «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի գործողության մեջ մտնելուց (2003 թ. հունվարի 1) ի վեր չի կատարվել հոդված 9-ի հետևյալ պահանջը.

---

<sup>3</sup> Ռազմավարություն ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների, <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>

«Սննդամթերքի անհրաժեշտ և փաստացի մակարդակների յուրաքանչյուր տարվա հաշվեկշիռը կառավարությունը հաստատում է մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը»<sup>4</sup>: Առավել ևս պատշաճ կերպով չի իրականացվում նաև 10-րդ՝ «Պարենային շուկայի պետական հսկողություն» հոդվածի պահանջները<sup>5</sup>:

Սննդամթերքի ֆիզիկական մատչելիության խնդիրը ՀՀ-ում հիմնականում լուծված է, քանի որ ամենածայրամասային բնակավայրերում անգամ պարենի որոշակի առաջարկ ապահովվում է՝ լավ թե վատ տեսականիով: Խնդիրն այլ է սննդամթերքի տնտեսական մատչելիության առումով: Պայմանավորված տարբեր գործոններով՝ բարձրանում է պարենի գները, բնակչության գնողունակությունը ցածր է, եկամուտների բևեռացման մակարդակը՝ բավականին մեծ, իսկ այս ամենն իր կնիքն է թողնում աղքատության մակարդակի և խորության վրա:

Բնակչության պարենային ապահովության համար անհրաժեշտ հիմնական արտադրանքների արտադրության և ներմուծման ծավալների, ինքնաբավության մակարդակի, պահուստների և այլ կարևոր ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի (ՀՀ ԱՎԿ) եռամսյակային ու տարեկան պարբերականությամբ հրապարակվող պարենային

---

<sup>4</sup> «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1113>

<sup>5</sup> Օրենքի նշված հոդվածը նախատեսում է՝

Պարենային շուկայի պետական հսկողությունն իրականացնում է կառավարությունը՝ սննդամթերքի արտադրության անհրաժեշտ և փաստացի մակարդակների հաշվեկշիռի հիման վրա:

Պարենային շուկայի պետական հսկողությունը ներառում է՝

ա) սննդամթերքի արտադրության, մատակարարման և ապրանքային պաշարների գնահատումը.

բ) պարենային անվտանգության ապահովման հատուկ ռեժիմների պայմաններում սննդամթերքի խոշոր խմբաքանակների շարժի հսկողությունը՝ արտադրությունից կամ ներմուծումից մինչև դրանց իրացումը.

գ) սննդամթերքի (այդ թվում՝ ներմուծված) որակի գնահատումը՝ Էկոլոգիական և սանիտարահամաճարակաբանական պահանջներին համապատասխան.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումների իրականացումը:

հաշվեկշիռը: Վերջինս ՀՀ ԱՎԿ-ի «Պարենային ապահովություն և աղքատություն» հրապարակման ամենակարևոր բաժիններից մեկն է, որը ներկայացնում է բուսական ու կենդանական ծագման մոտ 50 պարենային ապրանքների արտադրության և օգտագործման, ինչպես նաև ինքնաբավության տեղեկատվությունը:

ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներով 2010-2020 թ.թ. առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության մակարդակը ներկայացվում է աղյուսակ 1-ում: Ուսումնասիրվող տարիներին պարենային ցորենի ինքնաբավության առավելագույն մակարդակը կազմել է 53,2 % (2016 թ.)<sup>6</sup>, բուսական յուղինը՝ 7,8% (2015 թ.)<sup>7</sup>, հավի մսինը՝ 28,5 (2016 թ.)<sup>8</sup>, խոզի մսինը՝ 64,1 (2016)<sup>9</sup> և հատիկալնդեղեններինը՝ 61,6 % (2016 )<sup>10</sup>: Բավականին մեծ տատանումներ ունի շաքարի ինքնաբավության մակարդակը: Այս երևույթի բացատրությունը շատ դժվար է, քանի որ տեղում ճակնդեղի հումք սկսած 1988 թվականից չի մշակվում: Սպիտակի շաքարի գործարանը հիմնովին ավերվեց երկրաշարժի պատճառով: Դրանից հետո մինչև 2011թ. շաքարը հիմնականում ներմուծվում էր: Ախուրյանի շաքարի գործարանի շահագործումից հետո հույս կար, որ կվերականգնվի տեղում շաքարի ճակնդեղի մշակությունը և Հայաստանը շաքարով լիարժեք ինքնաբավ կլինի: Գործարանի ղեկավարության բավականի ուշացումով կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ շաքարի ճակնդեղի մշակությունը արդյունավետ չէ, քանի որ այդ նպատակով տրամադրվող հողերի կառուցվածքը և գյուղացիական տնտեսությունների փոքր հողակտորները թույլ չեն տալիս մեքենայացնել մշակության աշխատանքները, իսկ ձեռքով մշակության դեպքում շաքարի տեղական հումքի մրցունակությունը շատ ցածր է: Ուստի, նախապատվությունը տրվեց ներկրվող

<sup>6</sup> ՀՀ ՎԿ Պարենային ապահովություն և աղքատություն, 2017 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 73; - [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2017\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_2017_3.pdf)

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 75:



հումքով շաքարի արտադրությանը: Բացի դրանից, առանձին տարիներին պատրաստի շաքարի և շաքարավազի ներկրումն ավելի նպատակահարմար է, քան տեղում արտադրությունը: Այսինքն, շաքարի ինքնաբավությունը ավելի ճիշտ է անվանել քվազիինքնաբավություն, քանի որ տեղական գործոնի դերը շատ չնչին է: Գյուղատնտեսական արտադրողների հետ հարցումները ցույց են տալիս, որ շաքարի ճակնդեղից ավելի եկամտաբեր է կարտոֆիլի և կերային մշակաբույսերի մշակությունը: Այնպես որ, ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալները շաքարի տեղական արտադրության ծավալների մասին հավաստի չեն և վերլուծությունն ուղղակի անիմաստ է դառնում:

Աղյուսակ 1.

Առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության մակարդակը, %

Առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքները	Տարիները						
	2010 <sup>11</sup>	2015 <sup>12</sup>	2016 <sup>13</sup>	2017 <sup>14</sup>	2018 <sup>15</sup>	2019 <sup>16</sup>	2020 <sup>17</sup>
Ցորեն	33.7	49.5	53.2	33.2	31.5	25,9	24,4
Կարտոֆիլ	100.6	102.1	101.3	102.6	102.6	101,1	101,1
Բանջարեղեն	98.2	100.3	103.1	102.5	104.7	102,4	103,9
Միրգ	80.8	102.1	98.1	109.7	108.9	104,0	98,2

<sup>11</sup> ՀՀ ՎԿ Պարենային ապահովում և աղբատություն 2012 թվականի հունվար դեկտեմբեր, էջ 68-69 ; [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_12\\_6.1-6.6.doc.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_12_6.1-6.6.doc.pdf)

<sup>12</sup> ՀՀ ՎԿ Պարենային ապահովում և աղբատություն 2017 թվականի հունվար դեկտեմբեր, էջ 70-72 ; [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2017\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_2017_3.pdf)

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 73-75:

<sup>14</sup> ՀՀ ՎԿ Պարենային ապահովում և աղբատություն 2020 թվականի հունվար դեկտեմբեր, էջ 68-70 ; [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2020\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_4_2020_3.pdf)

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 71-73

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 74-76

<sup>17</sup> ՀՀ ՎԿ Պարենային ապահովում և աղբատություն 2020 թվականի հունվար սեպտեմբեր, էջ 74-76; [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_3\\_2021\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_3_2021_3.pdf)

Հատիկաընդեղենային մշակաբույսեր	41.7	58.2	61.6	49.7	38.6	38,2	37,3
Բուսական յուղ	4.1	7.8	5.6	4.3	2,2	1,5	0,9
Շաքար	24.6	89.6	91.4	65.2	68.6	73,0	38,0
Ձու	99.2	99.5	99.4	98.2	99.5	100	100,3
Կաթ (բացի կարագից)	97.2	93.0	88.6	91.2	86.8	84,3	82,0
Տավարի միս	84.8	92.3	92.5	91.5	89.2	90,4	87,3
Խոզի միս	39.9	57.8	64.1	58.0	53.3	55,5	45,1
Ոչխարի և այծի միս	100.0	107.7	133.8	138.9	128.6	113,8	100,4
Հավի միս	12.3	21.8	28.5	22.5	26.6	21,7	23,9
Խաղող	101.1	101.2	119.3	106.4	104.8	103,6	108,0

«Ա» պարենային անվտանգության գլխավոր հիմնախնդիրը եղել և մնում է բնակչությանը հացով ապահովելը: Բերված տվյալներից ակնհայտ է, որ 2015-2020 թթ. ցորենի ինքնաբավության մակարդակը տարեց տարի նվազում է: Այս իրողությունը խիստ անհանգստացնող է և հատուկ վերլուծություն է պահանջում:

Մինչև 2015 թվականը «Ա»-ում ցորենի ցանքատարածությունը 106-108 հազ. հեկտար էր, իսկ միջին բերքատվությունը գերազանցում էր հեկտարից 3 տոննայի ցուցանիշը<sup>18</sup>: Այդ պայմաններում ցորենի ինքնաբավության մակարդակը 35-50 % էր, որը թեև այնքան էլ բարձր չէ, բայց ներկայիս մակարդակը գերազանցում էր մոտ երկու անգամ: Այդ տարիներին այս կարևոր մշակաբույսի մշակության համար

<sup>18</sup> ՀՀ ՎԿ Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2011-2015;  
<https://www.armstat.am/am/?nid=82&id=1844>

կառավարությունը հատկացնում էր սուբսիդավորված գներով պարարտանյութ և դիզելային վառելիք, իսկ որոշակի տարածքների համար նաև ցանքատարածության յուրաքանչյուր հեկտարի հաշվով՝ ուղղակի սուբսիդավորում: Կոռուպցիոն երևույթների պատճառաբանությամբ այդ աջակցության միջոցառումները փոխարինվեցին վարկերի տոկոսի սուբսիդավորումով, որի արդյունավետությունը դեռևս ցածր է: Բնակլիմայական և տնտեսական ռիսկերի պատճառով, հողօգտագործողները խուսափում են վարկային պարտավորություններից և հաճախ գերադասում են վարելահողը չցանել: Դիցուկ, 2018թ. << կառավարության ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 2020 թ. հունվարի 23-ի N 68-Լ <<Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը եվ միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> որոշման 1-ին հավելվածում նշվում է, որ 2018թ. տվյալներով 445.6 հազ. հա վարելահողերից նպատակային է օգտագործվել ընդամենը 242.8 հազ. հա կամ 54.5% - ը<sup>19</sup>: Միանգամայն տրամաբանական է, որ այս դեպքում, եթե բնական խոնավությունը բավարարում է, նպատակային չօգտագործվող վարելահողերը վերածվում են խոտհարքի կամ օգտագործվում որպես արոտավայր: Վերջին հինգ տարիներին գրեթե բոլոր հիմնական մշակաբույսերի ցանքատարածության և բերքատվության նվազման միտումը ակնհայտ է (աղյուսակ 2.): Բավական է նշել, որ 2016 թ. համեմատությամբ, 2020 թ. ընդամենը ցանքային տարածությունը կրճատվել է 37 %-ով, որից՝ Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի տարածությունը՝ 39.6 , ցորենինը՝ 45,4, կարտոֆիլինը՝ 29,1 և բանջարեղենինը՝ 29,2 %-ով:

---

<sup>19</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=103616>

« քուսական ծագման հիմնական արտադրանքների արտադրությունը 2016-2020թթ.<sup>20</sup>

Ցուցանիշները	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Ցանքատարածությունը, ընդամենը, հազ. հա, որից՝	353.4	294.5	242.3	227.9	222.8
Հացահատիկային և հատիկարնդեղենային մշակաբույսեր, ընդամենը					
Տարածությունը, հազ. հա	198,1	155,2	130,2	121,2	121,7
Բերքատվությունը, ցենտ/հա	30,7	19,8	26,1	16,9	20,3
Համախառն բերքը, հազ. տոննա	604,2	302,5	337,7	198,7	243,0
Որից՝ ցորեն					
Տարածությունը, հազ. հա	108,7	82,4	66,7	59,9	59,4
Բերքատվությունը, ցենտ/հա	32,4	21,8	28,2	19,6	22,5
Համախառն բերքը, հազ. տոննա	350,4	176,4	187,5	112,6	131,9
Կարտոֆիլ					
Տարածությունը, հազ. հա	28.9	25.3	22.1	20.5	20.5
Բերքատվությունը, ցենտ/հա	209.8	214.9	187.3	199.2	208.2
Համախառն բերքը, հազ. տոննա	606.3	547.4	415.1	404.1	427.3
Բանջարանոցային մշակաբույսեր					
Տարածությունը, հազ. հա	30.2	28.3	21.7	20.6	21.4
Բերքատվությունը, ցենտ/հա	301.8	286.3	258.6	265.0	280.8
Համախառն բերքը, հազ. տոննա	968.6	861.0	628.2	621.6	650.7

Հայաստանի նման սակավահող հանրապետության համար այս միտումն ուղղակի անհանդուրժելի է: Իհարկե, բացի շրջանառու միջոցների անբավարարությունից դա ունի այլ լուրջ պատճառներ (հողակտորների կտրտվածություն և փոքր չափեր, տեխնիկայի անբավարարություն և թանկ ծառայություններ, բարձորակ սերմացուի պակաս և այլն), բայց բոլոր դեպքերում վարելահողերի անմշակ թողնելը պահանջում է հիմնովին վերանայել գյուղատնտեսության պետական կարգավորման և աջակցության քաղաքականությունը:

<sup>20</sup> Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ Պարենային ապահովություն և աղբատություն, 2020թ. հունվար-դեկտեմբեր: <https://armstat.am/am/?nid=82&id=2361>

Թերևս, հիմնականում արտադրության ծավալների կրճատումն է պատճառը, որ 2020 թվականին ցորենի ներմուծումը ավելացել է 40%-ով և հասել մինչև 350,5 հազ. տոննայի: Ընդ որում, ցորենի շուրջ 99,1 %-ը ներմուծվում է Ռուսաստանի Դաշնությունից: Ցորենի և այլորի հիմնական ներկրողը, որին բաժին է ընկնում շուկայի ավելի քան 42 %-ը «Ալեքս-Գրիգ» ընկերությունն է: Խոշոր ներկրող է նաև «Մանանա Գրեյն» ընկերությունը, շուկայի շուրջ 36 %-ը: Ստացվում է, որ ցորենի շուրջ 99 %-ը ներկրվում է մեկ երկրից և նշված երկու ընկերությունները ապահովում են շուկայի ավելի քան 78 %-ը<sup>21</sup>: Կարծում ենք, որ այսպիսի իրավիճակը նույնպես լուրջ ռիսկեր ունի և ինչ որ չափով կաշկանդում է տեղական արտադրության զարգացումը:

Եթե կարտոֆիլի, բանջարեղենի, մրգի, խաղողի, ձվի, կաթի և մսի (բացառությամբ հավի մսից) գծով երկրի ինքնաբավության մակարդակը բավարար է, ապա նույնը չի կարելի ասել նաև հատիկալնդեղենների, բուսական յուղի և թռչնի մսի մասին: Ինքնաբավության առումով ծայր աստիճան ցածր է բուսական յուղի ցուցանիշը: Ուսումնասիրվող տարիներին այն տատանվել է 0,9 - 7,8 %- ի շրջանակներում: Միանգամից պետք է արձանագրենք, որ ՀՀ գյուղատնտեսությունը բուսական յուղի արտադրության համար անհրաժեշտ քանակությամբ հումք (արևածաղիկ և եգիպտացորեն) արտադրելու հողային ռեսուրսներ չունի: Հայ սելեկցիոներները տեղայնացման և ընտրասերման միջոցով ստացել են բավականին բարձր բերքատու սոյայի սորտեր, որոնց մշակությունը կարող է նպաստել բուսական յուղի տեղական արտադրության ծավալների ավելացմանը: Սակայն, բնակչության շրջանում սոյայի յուղի օգտագործումը խիստ սահմանափակ է և պահանջարկի բացակայության պատճառով այդ տարբերակը դեռևս կիրառելի չէ:

---

<sup>21</sup> [https://finport.am/full\\_news.php?id=43993&lang=2](https://finport.am/full_news.php?id=43993&lang=2)

Հատիկային կերերի արտադրության տեղական հնարավորությունների սահմանափակության պատճառով դժվար է ավելացնել նաև հավի մսի ծավալները: Թերևս, այս առումով լուրջ ռեսուրս է տնային պայմաններում թռչնաբուծության զարգացումը: Բան այն է, որ սննդային մնացորդներով և կանաչ կերերով բակային պայմաններում պահվող թռչունները, հատկապես գյուղական ընտանիքներին բավականին էժան ու որակյալ թռչնամիս ու ձու են ապահովում:

Ընդհանուր առմամբ այսօր աշխարհի ոչ միայն գյուղական, այլև քաղաքային բնակավայրերում մեծ թափով զարգանում է ապագային միտված ամենաարդյունավետ տրենդը՝ քաղաքային կամ ինչպես միջազգայնորեն անվանում են՝ «city farming», «urban agriculture», «ուղղահայաց ֆերմերություն» («vertical farming») գյուղատնտեսությունը: Ուսումնասիրելով միջազգային փորձը կարելի է պնդել, որ քաղաքային գյուղատնտեսությունը բացի լրացուցիչ պարենի արտադրության հնարավորությունից, ունի կարևոր բնապահպանական, սոցիալական, ռեկրեացիոն և քաղաքաշինական նշանակություն: Վերջապես, տնային պայմաններում մեծ ջանքեր չպահանջող այս զբաղմունքը ոչ միայն հանգիստ է, այլև՝ ընտանիքի անդամներին միավորող ու երեխաների աշխատանքային դաստիարակությանը նպաստող լավագույն հնարավորություն:

Այսօր արդեն 7.9 միլիարդ կազմող աշխարհի բնակչության կեսից ավելին ապրում է քաղաքում<sup>22</sup>: Հայաստանում 2020թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ բնակչությունը կազմել է 2967,9 հազ. մարդ, որից 1899,3 հազ. մարդ կամ մոտ 64 % - ը բնակվում է քաղաքներում<sup>23</sup>: Կանխատեսվում է, որ 2050 թվականին քաղաքային բնակչությունը

---

<sup>22</sup> [World Population Clock: 7.9 Billion People \(2021\) - Worldometers](https://worldometers.info/world-population/) (англ.). [worldometers.info](https://worldometers.info). հղումը կատարվել է 2021թ. հոկտեմբերի 16-ի դրությամբ

<sup>23</sup> ՀՀ ԱՎԿ «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ», Երևան, էջ 3, 2020թ.

կգերազանցի մարդկության 2/3-ը, իսկ զարգացած երկրներում այն կկազմի ավելի քան 86%<sup>24</sup>:

Ներկայում երկրագնդի վրա օգտագործվում է 1.87 մլրդ հա վարելահողեր: Հարց է ծագում՝ ամենաարդիական ագրոտեխնոլոգիաների կիրառման պայմաններում քանի՞ մարդու պարենավորման խնդիր կարող է լուծել այդ տարածքը: Ականավոր գիտնական Դմիտրի Մենդելևը, որը ոչ միայն մեծ քիմիկոս էր, այլ նաև տնտեսագետ, դեռևս 1903 թվականին գրել է, որ 1 հա վարելահողը կարող է 2 մարդ կերակրել<sup>25</sup>: Հաշվարկվել է, որ եթե կիրառվեն ամենաարդիական տեխնոլոգիաներ երկրագունդը կարող է կերակրել մոտ 10 մլրդ մարդու<sup>26</sup>:

Տարեց-տարի նվազման միտում են դրսևորում նաև բնակչության մեկ շնչի հաշվով ձկան որսի և ծովամթերքների արտադրության ցուցանիշները<sup>27</sup>: Այսինքն, անխուսափելի է դառնում այն իրողությունը, որ քաղաքները պետք է կարողանան ինքնուրույն ապահովել սպառվող պարենի որոշակի քանակությունը: Աշխարհում այս տրենդը արդեն զարգանում է, հանձինս՝ այսպես կոչված՝ քաղաքային գյուղատնտեսության: Այս գործունեությունը համընդանուր անվանում չունի և առավել ընդունված են՝ «քաղաքային գյուղատնտեսություն» («city farming», «urban agriculture»), «ուղղահայաց ֆերմերություն» («vertical farming»), «ներքին գյուղատնտեսություն» («indoor agriculture») անվանումները: Սակայն, ինչպես էլ անվանենք, էությունը այն է, որ քաղաքային բնակավայրերի հարմարավետ տարածքները, ներառյալ՝ շենքերի կտուրները և բնակարանների պատշգամբները օգտագործվեն սննդի համար պիտանի բույսերի աճեցման, ինչպես նաև անասնաբուծական արտադրանքների արտադրության համար:

<sup>24</sup> <https://www.un.org/ru/un75/shifting-demographics>

<sup>25</sup> Менделеев Д.И. Заветные мысли. М.: Мысль, 1995. с. 39.

<sup>26</sup> <https://tinyurl.com/mudfukwm>

<sup>27</sup> Տես՝ [https://books.google.am/books/Состояние\\_мирового\\_рыболовства\\_и\\_аквакультуры\\_2020:\\_Продовольственная\\_и\\_сельскохозяйственная\\_организация\\_Объединенных\\_Наций\\_·\\_2020](https://books.google.am/books/Состояние_мирового_рыболовства_и_аквакультуры_2020:_Продовольственная_и_сельскохозяйственная_организация_Объединенных_Наций_·_2020)

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը քաղաքային գյուղատնտեսությունը բնորոշում է, որպես. «սահմանափակ տարածքի վրա քաղաքի սահմանագծում բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքի ստացում», որը հնարավորություն կընձեռնի բնակչությանը ապահովել թարմ սննդամթերքով, ստեղծել նոր աշխատատեղեր, օգտագործել օրգանական թափոնները և բարձրացնել կլիմայի փոփոխության նկատմամբ քաղաքների կայունությունը<sup>28</sup>: Կորոնավիրուսի համաճարակի պայմաններում թվարկված առավելություններին կարելի է ավելացնել նաև՝ արտաքին միջավայրի շփումները սահմանափակելու պայմաններում, ընտանիքի անդամներին թարմ և օրգանական սննդամթերքով ապահովումը:

Ներկայում ակնհայտ է, որ հատկապես խոշոր քաղաքներում ճարտարապետության բաղադրիչ է դառնում ոչ միայն կառույցների շրջակայքի, այլ նաև՝ կտուրների և պատշգամբների կանաչապատումը: Բոլորովին վերջերս՝ 2019 թվականի ապրիլի 15-ին դժոխային հրդեհի ճարակ դարձավ հանրահայտ Փարիզի Աստվածամոր տաճարի ծածկը: Վերականգման նախագծի մրցույթին ներկայացված շուրջ երկու տասնյակ առաջարկներից առավել ընդունելի է համարվել Vincent Callebaut Architectures ճարտարապետական բյուրոյի նախագիծը, որն ի թիվս բազմաթիվ հետաքրքիր նորամուծությունների, նախատեսում է տաճարի կտուրում հիմնել բանջարանոց և այգի, որտեղից զուտ բարեգործական նպատակով տարվա ընթացքում կհավաքվի 21 տոննա միրգ և բանջարեղեն<sup>29</sup>:

Քաղաքային գյուղատնտեսության տրենդը Ֆրանսիան և մասնավորապես Փարիզը տևական ժամանակ է զարգացնում են: Ահավասիկ, 2014 թվականին Փարիզի քաղաքագլուխ Անն Իդալգոն խոստացավ կանաչապատման համար հատկացնել 100 և քաղաքային գյուղատնտեսության համար՝ 30 հեկտար հողատարածք: Հաջորդ հինգ տարիներին Փարիզում ձևավորվեցին ավելի քան 60 քաղաքային ֆերմերային կազմակերպություններ: 2020 թ. Փարիզի 15-րդ շրջանում

<sup>28</sup> <https://tinyurl.com/2k4r36za>

<sup>29</sup> <https://varlamov.ru/3431550.html>



Expo Porte de Versailles շենքի կտուրին բացվելու էր աշխարհում ամենամեծ՝ 14000 քմ տարածքով բանջարանոցը<sup>30</sup>: Այսպիսի օրինակները բազմաթիվ են, ուստի անհրաժեշտ է չանտեսել առաջավոր փորձը և որպես սկիզբ այն կիրառել հատկապես Երևանում և Դիլիջանում, որտեղ առկա են անհրաժեշտ պայմաններ:

Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների 2019թ. Երևան քաղաքի գյուղատնտեսական հողերը 3348 հա է, որից մշակովի հողերը կազմել են 1732 հա (ցանքի տակ 404 և տնկարկներ 1328 հա)<sup>31</sup>: Երևանի կանաչ տարածքները պաշտոնապես կազմում են մոտ 6,760 հա, ինչը քաղաքի ընդհանուր մակերեսի 30%-ն է: Սրա մեջ մտնում են հանրային և մասնավոր տարածքները և կանաչ բուսականության ամեն տեսակի ծածկերը, ներառյալ՝ ծաղկաթմբերը և սիզամարգերը<sup>32</sup>: Պաշտոնական վիճակագրական տվյալներով 2020թ. Երևանի բնակչությունը 1092,0 հազ. մարդ է: Այսինքն, մեկ բնակիչին ընկնում է ընդամենը 6.2 ք.մ. կանաչ տարածք, մինչդեռ միջազգային չափանիշներով նվազագույնը պետք է կազմի 9 ք. մ.: Հետևաբար, քաղաքային գյուղատնտեսության զարգացումը կարևոր նշանակություն ունի նաև շրջակա միջավայրի բնապահպանական ստանդարտների ապահովման, քաղաքացիների ազատ ժամանակը հաճելի և հանրօգուտ աշխատանքին նվիրելու, հանգստի և երեխաների աշխատանքային դաստիարակության առումով: Բայց, ինչպես նշել ենք, գլխավոր խնդիրը թարմ և օրգանական պարենի արտադրությունն է: Տնային պայմաններում յուրաքանչյուր ամիս հնարավոր է ստանալ կանաչիների 2-3 բերք, իսկ միավոր տարածքի հաշվով բանջարաբուստանային մշակաբույսերի համախառն բերքը դաշտային պայմանների համեմատությամբ ավելացնել 3-4 անգամ:

Ինչպես նշեցինք, քաղաքային գյուղատնտեսության զարգացման բարենպաստ կլիմա և նպաստավոր պայմաններ կան Դիլիջանում: Բավական է նշել, որ ՀՀ ԱԺ-ն

---

<sup>30</sup> [https://ru.qaz.wiki/wiki/Urban\\_agriculture](https://ru.qaz.wiki/wiki/Urban_agriculture)

<sup>31</sup> [https://www.armstat.am/file/article/29\\_gt\\_2019.pdf](https://www.armstat.am/file/article/29_gt_2019.pdf)

<sup>32</sup> Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր,; Երևան, 2017թ.; էջ 62:

դեռևս 2015թ. հունիսի 23-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» օրենքը, որտեղ **«կանաչ» կամ «կենդանի» տանիքներ»** հասկացությունը բնորոշվեց որպես. «ջրամեկուսիչ թաղանթի վրա տեղադրված հատուկ բնահողի վրա աճեցրած բուսական շերտով մասնակի կամ լրիվ ծածկված շենքի տանիք»<sup>33</sup>: Դժվար չէ նկատել, որ սա դեպի քաղաքային գյուղատնտեսություն առաջին քայլն էր: Այդ ուղղության զարգացման իրատեսական հնարավորություններ ունեն հատկապես 88 հեկտար տարածք զբաղեցնող Դիլիջանի միջազգային դպրոցի և ՀՀ կենտրոնական բանկի ուսումնահետազոտական կենտրոնի ժամանակակից համալիրները:

ՀՀ քաղաքային բնակավայրերում քաղաքային գյուղատնտեսության զարգացման նպատակով անհրաժեշտ է՝ վերանայել քաղաքաշինության ոլորտի իրավական ակտերի այն սահմանափակումները, որոնք խոչնդոտում են քաղաքային գյուղատնտեսության զարգացմանը և կազմակերպել քաղաքային գյուղատնտեսության մենեջերների և մասնագետների պատրաստման դասընթացներ:

Պարենային անվտանգության մակարդակի բարձրացման կարևոր ռեսուրս է նաև պարենային կորուստների և սննդային թափոնների (ՊԿՍԹ) կրճատումը: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ, FAO) տվյալներով ներկայումս աշխարհում արտադրվում է պահանջարկից ավել պարենամթերք, բայց դրա անհավասարաչափ բաշխվածության և բնակչության վճարունակության տարբեր մակարդակների պատճառով, երկրագնդի տարբեր մասերում 690 մլն մարդ կամ բնակչության 8,9 % սովի են մատնված<sup>34</sup>: Նման իրավիճակում ուղղակի անհանդուրժելի է, որ պարենի հսկայական քանակություն ոչնչացվում կամ հայտնվում է աղբանոցում:

<sup>33</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=99182>

<sup>34</sup> FAO, «Food wastage footprint & Climate Change»: <http://www.fao.org/3/a-bb144e.pdf>

**Պարենային կորուստները** դրանք պարենի մատակարարների որոշումների և գործողությունների արդյունքում՝ սննդամթերքի քանակի և որակի կրճատումն է արտադրողից մինչև վաճառք շղթայում, բացառությամբ մեծածախ վաճառողների, հասարակական սննդի ձեռնարկությունների և սպառողների<sup>35</sup>:

**Սննդային թափոնները** սննդամթերքի քանակի և որակի կրճատումն է մեծածախ վաճառողների, հասարակական սննդի ձեռնարկությունների և սպառողների որոշումների և գործունեության արդյունքում: Սննդային թափոնները առաջանում են մեծածախ վաճառքի և սպառման փուլերում<sup>36</sup>:

ՀՀ ՎԿ-ի ընդունած մեթոդաբանությամբ՝ «Կորուստները բեռնափոխադրման և պահպանման բոլոր փուլերում՝ արտադրությունից մինչև սպառում, չօգտագործված պարենամթերքի ծավալն է: Կորուստների առաջացման հիմնական պատճառը իրացման և պահպանման ոչ լիարժեք համակարգերի առկայությունն է: Կորուստներ հատվածում չեն ներառվում արտադրության տարբեր փուլերում դրա անհրաժեշտ մաս հանդիսացող անխուսափելի կորուստները, օրինակ՝ ցորենի աղալու, չորացման գործընթացներում, դաշտում տեղափոխման և պահեստավորման հետ կապված կորուստները, ինչպես նաև տնային տնտեսություններում առկա սննդի ու վերամշակման ընթացքում առաջացող այլ կորուստները: Կորուստները հաշվարկվում են Պարենամթերքի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) առաջարկած գործակիցներով, որոնք, պայմանավորված որոշակի հանգամանքներով, կարող են ճշգրտվել»<sup>37</sup>: Դժվար չէ նկատել, որ վերջին՝ «պայմանավորված որոշակի հանգամանքներով, կարող են ճշգրտվել» ձևակերպումը «ազատում» է վիճակագրական ծառայության ձեռքերը և հնարավորություն տալիս կորուստները հասցնելու անտրամաբանական չափերի: Դիցուք, աղյուսակ 2-ի տվյալները վկայում

<sup>35</sup> Техническая платформа по измерению и сокращению продовольственных потерь и пищевых отходов. <http://www.fao.org/platform-food-loss-waste/ru/>

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> ՀՀ ՎԿ Պարենային ապահովություն և աղքատություն, 2020թ. հունվար-դեկտեմբեր, էջ 78:

են ՀՀ չորս հիմնական մշակաբույսերից երեքի կորուստների ցուցանիշի օրինաչափությունից դուրս կտրուկ փոփոխության մասին:

### Աղյուսակ 3


Բուսական ծագման հիմնական պարենային ապրանքների կորուստները ըստ ՀՀ ՎԿ տվյալների<sup>38</sup>

Արտադրանքը	2005-2010թթ. միջինը			2011-2015թթ. միջինը			2016-2020թթ. միջինը		
	Արտադրությունը, հազ. տ	Կորուստը հազ.տ	Կորուստի %-ը	Արտադրությունը, հազ. տ	Կորուստը հազ.տ	Կորուստի %-ը	Արտադրությունը, հազ. տ	Կորուստը հազ.տ	Կորուստի %-ը
Ցորեն	211,1	11,7	5,5	295,4	30,8	10,4	169,4	51,4	30,3
Կարտոֆիլ	568,6	79,7	14,0	792,1	105,2	13,3	465,2	50,5	10,8
Բանջարեղեն	938,6	29,6	3,1	1120,2	147,8	13,2	882,9	162,3	18,4
Խաղող	200,4	9,8	4,8	256,5	11,4	4,5	306,4	23,8	7,8

Բերքի կորստի անտրամաբանական աճը խիստ ակնհայտ է հատկապես ցորենի օրինակով, որը ներկայացված է թիվ 1 գծապատկերում: Ինչպես երևում է գծապատկերից 2005-2011թթ. ցորենի կորուստները միջին հաշվով կազմել է արտադրված բերքի 4,4%-ը: 2011թ-ից սկսած, հիմնականում վիճակագրական տվյալների խեղաթյուրման պատճառով, կորուստները աճել են և 2019թ հասել 43,5, իսկ 2020թ-ին՝ 34%-ի: Թերևս, միանգամայն տեղին է ՊԳԿ ագրոարդյունաբերության հարցերով պատասխանատու Ռոբերտ վան Օտերդեյքի այն դիտարկումը, որ «Հայաստանում հասցեագրման կարիք ունեցող ամենասուր խնդիրները պարենի կորուստների և թափոնների վերաբերյալ ճշգրիտ տվյալների պակասն է, անտեղյակությունը խնդրի բարդությունից, դրա ներգործությունից, պատճառներից ու արժեչղթանների մասնակիցների, սպառողների, ծառայություն մատուցողների և շրջակա միջավայրի վրա թողած հետևանքներից: Վերհանված խնդիրների թվում են պարենի կորուստների եւ թափոնների ծավալի կրճատմանն ուղղված ջանքերի

<sup>38</sup> Հաշվարկվել է հեղինակների կողմից ըստ ՀՀ ՎԿ 2005-2020թթ. «Պարենային ապահովություն և աղքատություն» հրապարակման տվյալների:

ասպարեզում թերի համագործակցությունն ու գործողությունների համակարգումը, ինչպես նաև կլիմայի փոփոխության ազդեցություններին համարժեք ձևով արձագանքման պատշաճ մեխանիզմների բացակայությունը»<sup>39</sup>:



Գծապատկեր 1. Յորենի տարեկան կորուստների դինամիկան<sup>40</sup>

ՊԿՍԹ (Պարենային կորուստների և սննդային թափոնների) կրճատման հիմնախնդիրն ունի գլոբալ բնույթ: Բնավ պատահական չէ, որ 2015թ սեպտեմբերի 25-ին 193 երկրների ղեկավարների մասնակցությամբ ՄԱԿ-ը ընդունեց մինչև 2030թ-ի Կայուն զարգացման 17 նպատակներ (ԿԶՆ), որոնցից 2-րդի՝ Սովի վերացման հիմնախնդրի, լուծման կարևոր ուղիներից մեկն էլ «պարենային կորուստների դեմ պայքարին ներգրավվածությունն է»<sup>41</sup>: Պետք է նկատի ունենալ, որ ԿԶՆ-ի ծրագրերի կեսից ավելին անուղակիորեն դարձյալ առնչվում է այս հիմնախնդրին: Ուստի

<sup>39</sup> <http://un.am/hy/news/829>

<sup>40</sup> Պարենային անվտանգության գնահատումը և մոդելավորումը կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում/ Կ. Հարությունյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2021.թ., էջ 46:

<sup>41</sup> <http://makingsense.rbc.ru/sdgs>

Հայաստանը որպես մասնակից երկիր պարտավորված է գործուն քայլեր իրականացնել դրանց իրականացման համար: Միջազգային կազմակերպությունների՝ Միավորված ազգերի զարգացման ծրագրի, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Պարենի համաշխարհային ծրագրի և այլ ծրագրերի նախաձեռնությամբ որոշակի միջոցառումներ իրականացվում են, սակայն արտադրողների և սպառողների շրջանում ՊԿՍԹ կրճատումը դեռևս զանգվածային և գործնական բնույթ չի ստանում: Որպես կոնկրետ օրինակ պետք է վկայակոչել, որ Հաստատում տարիներով ձգձգվում է աղբի դասակարգման և արդյունավետ վերամշակման համակարգի ներդրումը, դեռևս եզակի երևույթ է բարեգործական ճաշարանների հովանավորումը, իսկ, աշխարհում լայն տարածում ստացած Ֆուդշերինգի համակարգը ընդհանրապես չի կիրառվում:

Քանի որ Ֆուդշերինգը ՊԿՍԹ կրճատման և սովի հաղթահարման համեմատաբար նոր ձեռնարկում է կամ ժամանակակից արտահայտությամբ՝ նոր տրենդ է, ավելի մանրամասնորեն անդրադառնանք այդ համակարգին: Բառացի Ֆուդշերինգ բառակապակցությունն ունի երկու արմատ՝ անգլերեն food-«պարեն, սնունդ» և share —«կիսվել, միասին օգտագործել» իմաստով: Կարծում ենք՝ շատերին է հայտնի, որ շատ զարգացած երկրներում հասարակական կարգով գործում են խոցելի խմբերին անվճար սննդամթերք հատկացնող ծառայությունները: Այդ նախաձեռնությունը սկզբնավորվեց 2012 թվականին Գերմանիայում: Այս երկրում պարենի և գյուղատնտեսության նախարարության տվյալներով տարեկան թափվում է օգտագործման համար պիտանի 11 մլն տոննա սննդամթերք: Գերմանական կառավարության ընդունած ծրագրով նախատեսվում է մինչև 2030 թվականը այդ ցուցանիշը երկու անգամ կրճատել: Այս գործում մեծ դերակատարություն ունի ֆուդշերինգի կամավորական շարժումը, որին մասնակցում են 50 հազարից ավել

կամավորականներ և մինչև 2020 թվականը, ութ տարվա ընթացքում կորստից փրկել են 21,1 մլն տոննա սննդամթերք<sup>42</sup>:

Ֆուդշերինգի նախաձեռնությունը շատ կարճ ժամանակաընթացքում ոչ միայն տարածում գտավ աշխարհի զարգացած երկրներում, այլև ենթարկվեց որոշակի իրավական կարգավորման: Օրինակ, Ֆրանսիայում օգտագործման համար պիտանի սննդամթերքի թափելը արգելվում է օրենքով, իսկ ԱՄՆ Օրեգոն նահանգում ընդհանրապես արգելվում է թափել սննդի ցանկացած մնացորդ:

Իսպանական Prosalus ոչ առևտրային կազմակերպության հիմնադրած Yonodesperdicio ֆուդշերինգ ծառայությունը, բացի օգտագործման համար պիտանի սննդամթերքի որոնման ու կարիքավորներին հատկացման գործառույթներից, նաև պետական աջակցությամբ իրականացնում է սննդամթերքի խնայողաբար օգտագործման, պահպանման և կորուստների կրճատման քարոզչություն: Այդ թեմաներով հրատարակում է հանրամատչելի գրականություն, կազմակերպում ուսուցում և վարպետության դասեր<sup>43</sup>:

Ֆուդշերինգ շարժումը, որի կամավոր մասնակիցներին անվանում են ֆուդսերվերներ, գնալով լայն տարածում է ստանում նաև Արևելյան Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում: Հայաստանում դեռևս նման շարժում չի ծավալվում, սակայն ՄԱԿ-ի ՊԳԿ-ն նախատեսում է իրականացնել ՊԿՍԹ կրճատման նոր ծրագրեր, որոնց շրջանակում նպատակահարմար է աջակցել նաև Ֆուդշերինգի նախաձեռնություններին:

---

<sup>42</sup> <https://tinyurl.com/yhrbuz6z>

<sup>43</sup> <https://1mlntons.ru/tpost/hj6ta28ucu-fudshering-v-ispanii>

## 2. ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Գինը շուկայի ամենակարևոր բնութագրիչ ցուցանիշն է: Արդարացի գինը վաճառողի և գնորդի կողմից տարբեր իմաստ ունեն, մինչդեռ իրական գինը ձևավորվում է այդ երկու սուբյեկտների փոխհամաձայնությամբ: Միջազգային շուկայի գների ձևավորման կառուցակարգերը առանձնահատուկ են: Այստեղ, բացի առաջարկի և պահանջարկի դասական գործոններից, որոշակի կարևորություն ունեն լոգիստիկան, պահուստների ծավալը, աշխարհաքաղաքական վիճակը և առանձին երկրների նկատմամբ կիրառվող տնտեսական արգելքները: Ուստի, մեզ համար երբեք համոզիչ չի եղել այն պնդումը, որ պարենային ինքնաբավության մակարդակն այնքան էլ էական չէ, և վճարունակ լինելու դեպքում պակասը միշտ էլ կարելի է լրացնել ներմուծման հաշվին:

Իհարկե, համաշխարհային տնտեսության միջազգայնացման արդի փուլում, եթե բացառենք տվյալ երկրի ներքին և արտաքին սպառնալիքները, տնտեսապես նպատակահարմար է որոշակի պարենամթերքներ ներմուծել այն երկրներից, որտեղ դրանց արտադրությունն ավելի նպաստավոր է: Սակայն, ինչպես ցույց տվեց COVID-19 համավարակը, անգամ գյուղատնտեսական արտադրության համար նպաստավոր պայմաններում, երբ 2019-2020 թվականներին ավելացավ բուսական և կենդանական ծագման սննդամթերքի ու հումքի արտադրության ծավալները, միաժամանակ՝ հարաբերական կայուն էր պահանջարկի ցուցանիշը, պարենի համաշխարհային գները թռիչքային վարքագիծ դրսևորեցին:

Եթե հիվանդացության առումով աշխարհի բնակչության ստվար հատվածը դեռևս խուսափել է COVID-19 համավարակից, ապա սոցիալ-տնտեսական և հոգեբանական առումով այն համատարած բացասական ազդեցություն ունի տնտեսական ու քաղաքական սուբյեկտների գործունեության վրա: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշի կարծիքով այս համավարակով պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամը վերջին 100 տարիների ամենաազդեցիկն



էր: Նա ներկայացրել է այն երեք գլխավոր սպառնալիքները, որոնց հետ առերեսվում է մարդկությունը համավարակի ընթացքում: Դրանցից առաջինը կառավարությունների և հանրային ինստիտուտների հանդեպ վստահության կորուստն է, երկրորդը՝ համաշխարհային տնտեսական կարգի փլուզումը և երրորդը՝ կորոնավիրուսն օգտագործվում է բռնաճնշումների արդարացման համար<sup>44</sup>:

Ավստրալիական ազգային համալսարանի հաշվարկներով կորոնավիրուսի համավարակի պատճառով համաշխարհային տնտեսության վնասը մինչև 2025 թվականը կարող է հասնել 35 տրիլիոն ԱՄՆ դոլարի<sup>45</sup>:

ԱՄՆ ֆինանսների նախկին նախարար Լոուրենս Սամմերսի և Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Դեվիդ Կաթլերի հոդվածում նշվում է, որ, հաշվի առնելով երկարաժամկետ հետևանքները, միայն ամերիկյան տնտեսությունը կորոնավիրուսի համավարակի պատճառով կկորցնի շուրջ 16 տրիլիոն ԱՄՆ դոլար, որը կազմում է ԱՄՆ ՀՆԱ-ի շուրջ 90%-ը<sup>46</sup>:

Քյոլնի գերմանական տնտեսության ինստիտուտի տվյալներով, Գերմանիայի տնտեսությունը արդեն իսկ կորցրել է 300 մլրդ եվրո<sup>47</sup>:

Ըստ ՌԴ Ազգային վարկանիշային գործակալության (NRA) տվյալների՝ ռուսական տնտեսության տարեկան կորուստը կարող է կազմել 17,9 տրիլիոն ռուբլի և գործազուրկների թիվը կավելանա 15,5 մլն մարդով<sup>48</sup>: Երկրների թվարկումը կարելի է շարունակել, բայց միտումը միանշանակ է՝ համավարակը մեծ վնաս է հասցնում տնտեսությանը:

Հետաքրքիր է, որ ներկայումս աշխարհի խոշոր երկրներն ավելի շատ են տուժում համավարակի պատճառով ահագնացող պարենային գնաճից: Օրինակ, Իրանում գների բարձրացումը կազմել է 65 %, Արգենտինայում՝ 44 %, Նիգերիայում՝ 23

<sup>44</sup> <https://tinyurl.com/mnua28zz>

<sup>45</sup> <https://tinyurl.com/5bsdy64r>

<sup>46</sup> <https://tass.ru/ekonomika/9699479>

<sup>47</sup> <https://tinyurl.com/mr459a8p>

<sup>48</sup> <https://www.gazeta.ru/business/2020/04/16/13050379.shtml>

%,Եթովպիայում՝ 22 %, Թուրքիայում՝ 17 %, Պակիստանում՝ 16 %, Բրազիլիայում՝ 13 %<sup>49</sup>: Իհարկե, սրանք պարենային զամբյուղում ներառված սննդամթերքների միջին տվյալներն են, որոնցից եթե առանձնացնենք որոշ ապրանքատեսակներ, ապա գների աճը պարզապես սրընթաց է: Դիցուք, Բրազիլիայում մեկ տարվա ընթացքում բրնձի գինը բարձրացել է 80, իսկ մսի գինը 20%-ով<sup>50</sup>: Գների այսպիսի բարձրացումից էլ ավելի խոցելի են դառնում այն երկրները, որոնց պարենային ինքնաբավությունը ցածր է, այսինքն՝ մեծ չափով կախված են արտաքին շուկայից և, բացի այդ՝ բնակչության ծախսերի հիմնական մասը բաժին է ընկնում սննդամթերքին:

Ակնհայտ է, որ COVID-19 համավարակը ծանր հետք է թողել կյանքի բոլոր ոլորտների վրա: Փորձագետները համակարծիք են, որ Երկրորդ աշխարհամարտից հետո սա ամենամեծ համաշխարհային ճգնաժամն է: Արդեն իսկ հաշվարկվել է, որ համաշխարհային տնտեսության կորուստները անցել են 3.5 տրիլիոն ԱՄՆ դոլարը, որը 2.5 անգամ գերազանցում է 2008 թվականի ճգնաժամի վնասներին<sup>51</sup>:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության վերջին տվյալներով օրական կորոնավիրուսով վարակվածների թիվն աշխարհում ավելացել է 363514 մարդով: Վարակվել են ավելի քան 179.1 մլն և մահացել՝ 3.8 մլն-ից ավել մարդ<sup>52</sup>: Սակայն աշխարհի բազմաթիվ երկրներում ամենօրյա անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների գների բարձրացումն ավելի է անհանգստացնում բնակչությանը, քան COVID 19-ով հիվանդանալու վտանգը: Հաշվի առնելով այս իրողությունը, գրեթե բոլոր երկրներում իշխանությունները աննախադեպ քայլեր են ձեռնարկում տնտեսական անկումը կանխելու և արդեն իսկ մեծ չափերի հասնող տնտեսական կորուստները վերականգնելու համար:

2021 թ. ապրիլի դրությամբ, ինչպես ընթացիկ, այնպես էլ՝ նախորդ տարում, գնաճի ամենաբարձր մակարդակ է գրանցվել Իրանի Իսլամական Հանրապետությունում,

<sup>49</sup> <https://vz.ru/world/2021/5/17/1099630.html>

<sup>50</sup> Նույն տեղում:

<sup>51</sup> <https://tinyurl.com/yvnewzsb>

<sup>52</sup> <https://tinyurl.com/4bw7fsp7>

Թուրքիայում, Ղրղզստանում, Ուզբեկստանում և Ուկրաինայում: Բարեբախտաբար, պարենային ապրանքների գնաճը համեմատաբար փոքր է Հայաստանի հիմնական գործընկեր Ռուսաստանում, իսկ ԵՄ երկրներում և ԱՄՆ-ում այն անգամ ցածր է սպասվող մակարդակից (աղյուսակ 4):

#### Աղյուսակ 4

#### Պարենային գնաճը Հայաստանի հարևան և հիմնական գործընկեր երկրներում (%)<sup>53</sup>

Երկրները	2021 թ. ապրիլ	2020 թ. ապրիլ	Գրանցման ամսաթիվը
Հայաստան	8.3	7.4	2021-04
Ադրբեջան	4.4	4.8	2021-04
Բելառուս	7.4	7.8	2021-04
ԵՄ երկրներ	0.1	0.6	2021-04
Վրաստան	3	5.7	2021-04
Իրան	61.5	63.5	2021-05
Ղազախստան	9.3	9.8	2021-05
Ղրղզստան	12.7	16.5	2021-04
Տաջիկստան	13.7	13.5	2021-01
Մոլդովա	5.1	3	2021-04
Ռուսաստան	6.55	7.58	2021-04
Թուրքիա	16.98	17.44	2021-04
Ուկրաինա	9.4	10.4	2021-04
ԱՄՆ	2.4	3.5	2021-04
Ուզբեկստան	16.9	20.1	2019-12

Աշխարհում պարենային ապրանքների գների վերաբերյալ ամենաթարմ տեղեկատվությունը հրապարակում է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ): Վերջինս ունի օպերատիվ կարգով տեղեկատվության ստացման, մշակման ու հրապարակման գործուն ցանց, որը հնարավորություն է ընձեռում բացահայտել աշխարհում պարենային անվտանգության վիճակը և հավաստի ազդակներ ուղարկել պատասխանատուներին, առավել խոցելի խմբերին

<sup>53</sup> Աղբյուրը <https://ru.tradingeconomics.com/country-list/food-inflation>

աջակցելու համար: Ավելին, ՊԳԿ-ն ունի նաև սահմանափակ միջոցներ, այսպես կոչված «արտակարգ աջակցության» ծրագրերի համար, որից պարբերաբար օգտվում է նաև Հայաստանը:

Այդուհանդերձ, այս կազմակերպության գերխնդիրը գյուղատնտեսության և պարենի ոլորտում գլոբալ ու տարածաշրջանային առումով իրավիճակի գնահատումն է, մասնագիտական վերլուծության միջոցով հիմնախնդիրների ախտորոշումը և դրանց լուծման համար հնարավորությունների գեներացման ծրագրերի մշակումը: Առանձնակի կարևորություն ունի և գործնական հետաքրքրություն է ներկայացնում ՊԳԿ-ի գների համաթիվը, որը ցույց է տալիս պարենային ապրանքների միջազգային գների ամսական շարժը: Ներկայումս այն հաշվարկվում է, հիմք ընդունելով 2014-2016 թթ միջին գները: Շնորհիվ այսպիսի օպերատիվ վիճակագրության, առավել կանխատեսելի են դառնում պարենային ապրանքների միջազգային շուկայի գնագոյացման միտումները և դրանց սոցիալական հետևանքները: Հարկ է նշել, որ այդ համաթվի հաշվարկման համակարգը հարուստ բազա է հատկապես պարենային մեծ կախվածություն ունեցող երկրների արտաքին քաղաքականության ուղղորդման և առանձին արտադրատեսակների գների վարքագծի գնահատման համար:

Ի դեպ, ինչպես 2010-2014 թվականների, այնպես էլ 2020 թ. հոկտեմբերից մինչև 2021 թ. մայիսի պարենային գների բարձրացման միտումները ցույց են տալիս, որ համաշխարհային գների փոփոխության պատճառները նույնը չեն (աղյուսակ 2): Այսպես, փորձագիտական գնահատականներով, եթե առաջին դեպքում հիմնական պատճառը գլոբալ ֆինանսական ճգնաժամն էր, հատկապես՝ նավթի գնի բարձրացումը, ապա վերջին շրջանում գների համաթվի բարձրացումը հիմնականում թելադրված է կորոնավիրուսի համավարակով: Այսպես, **կոնկրետ գյուղատնտեսական արտադրության վրա COVID-19-ի ազդեցությունը մեծ չէ, սակայն բեռնափոխադրումների ընթացքի և մատակարար երկրների արտահանման մասնաբաժնի փոփոխության վրա այն էական ազդեցություն ունի:** Մասնավորապես, նկատելիորեն ավելացել է որոշ պարենային ապրանքների

սեփական պահուստները, որը կրճատել է առաջարկը և խախտել լոգիստիկ համակարգի ակտիվությունն ու դինամիկան:

## Աղյուսակ 5

### ՄԱԿ ՊԳԿ-ի (FAO) պարենի գների համաթիվը<sup>54</sup>

Տարիները	Գների համաթիվը	Միս	Կաթ	Հացահատիկ	Բուսական յուղ	Շաքար	
2010	106,7	91,0	111,9	107,5	121,9	131,7	
2011	131,9	105,3	129,9	142,2	158,4	160,9	
2012	122,8	105,0	111,7	137,4	138,3	133,3	
2013	120,1	106,2	140,9	129,1	119,5	109,5	
2014	115,0	112,2	130,2	115,8	110,6	105,2	
2015	93,1	96,7	108,0	91,0	101,9	99,1	
2020	98,0	95,5	101,8	102,7	99,4	79,5	
2021	հունվար	113,3	96,0	111,2	124,2	138,3	94,2
	փետրվար	116,4	97,8	113,1	125,7	147,4	100,2
	մարտ	119,1	100,8	117,5	123,6	159,2	96,2
	ապրիլ	121,3	102,7	119,1	125,6	162,0	100,0
	մայիս	128,1277,9	107,4	121,1	132,8	174,9	106,8
	հունիս	125,0	110,7	119,9	129,4	157,7	107,7
	հուլիս	124,4	114,1	116,7	125,5	155,5	109,6
	օգոստոս	128,5	115,4	116,2	129,9	165,9	120,5
	սեպտեմբեր	130,0	115,5	117,9	132,5	168,6	121,2

Ինչպես երևում է աղյուսակ 5-ի տվյալներից՝ ՊԳԿ-ի գների համաթիվը հատկապես ակտիվ աճ է դրսևորել 2021 թ. հունվար-ապրիլ ամիսներին: Իսկ մայիսին նախորդ ամսվա համեմատությամբ բարձրացել է 5,6% ով և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 39,7 %-ով: Այս մայիսյան ցուցանիշը 2010թ. հոկտեմբերից հետո ամենաբարձր ամսական գնաճն է: Հատկապես անհանգստացնող է այն փաստը, որ պարենային ապրանքների գները վերջին 12 ամիսներին անընդհատ բարձրացել են: Մայիս ամսին գների այսպիսի կտրուկ

<sup>54</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները <https://tinyurl.com/5n9aysc8> [տվյալների հիման վրա](#)

բարձրացումը հիմնականում պայմանավորված է յուղի, շաքարի, հատիկային և մսակաթնային ապրանքների գների թռիչքով: Այսպես, 2021 թ. մայիսին հատիկային ապրանքների գները նախորդ ամսվա համեմատությամբ բարձրացել է 7,2 %-ով, իսկ 2020 թ. ապրիլի համեմատությամբ՝ 36,6%-ով: Համեմատվող ժամանակահատվածներում բուսական յուղի միջին գինը բարձրացել է 12,9, շաքարը՝ 6,8, միսը՝ 4,7 և կաթնամթերքը՝ 2,0 %-ով:

Այդուհանդերձ, ՊԳԿ-ի կանխատեսմամբ, 2020-2021 թվականների բերքահավաքից մինչև բերքահավաք ընկած ժամանակահատվածում հացահատիկի վաճառքի ծավալը նախորդ տարվա ցուցանիշը կգերազանցի 5,9 %-ով և կկազմի 467 մլն տոննա: Նախատեսվում է, որ հատկապես կավելանա ֆուրաժային հացահատիկը, ինչպես նաև՝ բրինձը և ցորենը<sup>55</sup>:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ պարենի հումքային ապրանքների համաշխարհային գներն աճում են 12-րդ ամիսն անընդմեջ, առաջին հերթին բարձրացել է շաքարի գինը: Վերջինս բացատրվում է շաքարեղեգնի մի մասը որպես կենսավառելիքի հումք օգտագործելու հանգամանքով: 2021 թ. ապրիլին պարենի համաշխարհային գները հասել են 2014 թվականից ի վեր առավելագույն մեծությունների:

Քանի որ Հայաստանի պարենային շուկան ուղղակի և անուղղակի կախված է արտաքին շուկայի գներից, ապա վերջինիս գնային տատանումներն անխուսափելիորեն ազդում են ՀՀ ներքին շուկայի վրա: Ի դեպ, ուղղակի ազդեցության են ենթարկվում հատկապես ներկրումների հաշվին պահանջարկի զգալի մասը բավարարող՝ հացահատիկի, բուսական և կենդանական յուղերի, թռչնի և խոզի մսի շուկաները: Անուղղակի կախվածություն ունեն շաքարի և կարտոֆիլի գները, քանի որ առաջինի հումքը ամբողջովին ներկրվում է, իսկ կարտոֆիլի բարձորակ տնկանյութի պահանջը հիմնականում բավարարվում է եվրոպական

---

<sup>55</sup> <https://news.un.org/ru/story/2021/05/1402482>

երկրներից գնումների հաշվին: Բավական է նշել, որ 2021 թ. ցանքի համար ներկրված տնկանյութի 1 տոննայի գինը բարձրացել է շուրջ 100 հազ. դրամով: Վերջինս անխուսափելիորեն ազդեց ստացվող բերքի ինքնարժեքի և իրացման գնի վրա: Բավական է նշել, որ 2021թ. հուլիսից սկսած նախորդ տարվա համապատասխան ամսվա համեմատությամբ կարտոֆիլի գինը բարձրացել է՝ հուլիսին 38.4 օգոստոսին 58.0, սեպտեմբերին 66.7, հոկտեմբերին 75.6 և նոյեմբերին 77.4 տոկոսով<sup>56</sup>:

Պարենային մթերքների գների բարձրացումը ոչ միայն ազդում է բնակչության աղքատության խորացման վրա, այլև հարկադրում է հրաժարվել որակյալ սննդից ու հավասարակշռված սննդաբաժնից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գների բարձրացման պայմաններում, հատկապես աղքատության սահմանագծին մոտ գտնվող ընտանիքներում սննդամթերքի վրա կատարվող ծախսերը մեծ փոփոխության չեն ենթարկվում: Այսինքն, այլ կերպ չի կարող լինել, քանի որ ցածր վճարունակության պայմաններում հարկադրված են փոփոխության ենթարկել տեսականին, ավելացնել համեմատաբար էժան, ոչ որակյալ սննդամթերքի սպառումը: Նման իրավիճակում մեծ տեղ է տրվում մակարոնեղենից, կարտոֆիլից, բուսական յուղից, այլուրից ու բանջարեղենից պատրաստվող ճաշատեսակներին: Անհանդուրժելի է, որ անգամ գյուղական ընտանիքների համար թանկ հաճույք է դարձել կենդանական ծագման սննդամթերքների՝ ձվի, կարագի, կաթնամթերքի, առավել ևս՝ մսի օգտագործումը:

ՀՀ ՎԿ տվյալները ցույց են տալիս, որ 2021 թ ապրիլին, նախորդ տարվա ապրիլի համեմատությամբ, շաքարը թանկացել է 41, արևածաղկի յուղը՝ 73,5, ձուկը և ձկնամթերքը՝ 41, ձուն՝ 55,7, կաթը և պանիրը՝ 13,4, մսամթերքը՝ 4, մրգերը՝ 10,4 և բանջարեղենը՝ 8,5%-ով: Իսկ, ընդհանուր առմամբ, պարենային ապրանքների գները այդ ժամանակահատվածում բարձրացել են 8.3%-ով<sup>57</sup>: Ինչպես նկատելի է աղյուսակ

<sup>56</sup> [https://www.armstat.am/file/article/cpi\\_11\\_2021-arm.pdf](https://www.armstat.am/file/article/cpi_11_2021-arm.pdf)

<sup>57</sup> <https://tinyurl.com/2p9jd7ff>

3-ի տվյալներից՝ մեկ տարվա ընթացքում պարենի գների նման տեմպով բարձրացումը 2016-2020 թթ. համեմատությամբ աննախադեպ է:

## Աղյուսակ 6

### Սպառողական գների ինդեքսները (2016-2020 թթ. դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)<sup>58</sup>

Ոլորտները	2016	2017	2018	2019	2020
Սպառողական գների ինդեքսը, ընդամենը	98,5	102,6	101,8	100,7	103,7
այդ թվում՝					
աննդամթերքի (ներառյալ ոչ ալկոհոլայի, ալկոհոլային խմիչք և ծխախոտ)	99.8	105.3	101.8	100.2	105.5
աննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի	99.7	105.5	101.6	99.7	104.9
ալկոհոլային խմիչքի և ծխախոտի	101.1	104.0	103.9	104.6	110.4
ոչ պարենային ապրանքների	96.6	101.7	103.2	101.4	103.4
Ծառայությունների	99.3	99.5	100.8	101.1	101.6

Միանգամայն տրամաբանական է, որ գների նման բարձրացումը պետք է պարտադրի իշխանություններին համապատասխան միջոցներ ձեռնարկել: ՌԴ-ում, Բելառուսում և Կենտրոնական Ասիայի երկրներում նախապատվությունը տրվում է վարչական միջոցներով գների աճի զսպմանը: Բայց պետք է խոստովանել, որ անգամ համավարակի պայմաններում գների կարգավորման վարչական ձևերը այնքան էլ չեն արդարացնում: Հետևաբար, անհրաժեշտ է չչեղվել պարենային շուկայի ինքնակարգավորման ուղուց, որի հիմնական կողմնորոշիչը առաջարկի և պահանջարկի խթանումն է: Նախ, գների թռիչքաձև ընթացքը կանխելու հիմնական գործոնը գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ծավալների

<sup>58</sup> Աղբյուրը. ՀՀ ՎԿ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 69:



ավելացումն է և տեսականու բազմազանեցումը: Դեռևս 2020 թ կեսերին ՀՀ կառավարությունը հաստատել է համավարակի պայմաններում գյուղատնտեսական արտադրությունը խթանելու երկուսուկես տասնյակ ծրագրեր: ՀՀ-ի պայմաններում դրանք աննախադեպ են և կարող են բարձր արդյունք ապահովել: Ի դեպ, այդ ծրագրերը կոչված են խթանելու ոչ միայն առաջարկը, այլև նոր աշխատատեղեր ստեղծելու և արտահանումը խթանելու շնորհիվ ավելացնել պահանջարկը: Ամբողջ հարցը նրանում է, որ այդ ծրագրերի մեծ մասը լիարժեք իրականացման և սպասվող արդյունքների ապահովման համար որոշակի ժամանակ են պահանջում: Թեև ջերմոցային տնտեսությունների և ինտենսիվ այգիների ծրագրերը աննախադեպ արագությամբ են իրականացվում, սակայն ոռոգման համակարգերի զարգացման, հատկապես՝ նոր ջրամբարների, պոմպակայանների, կաթիլային ոռոգման համակարգերի և արտադրական ենթակառուցվածքների ծրագրերը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դանդաղում են: Պետք է հուսալ, որ մոտ ապագայում այս խնդիրները արժանապատիվ լուծում կունենան:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր,; Երևան, 2017թ.; էջ 62:
2. ՀՀ ԱՎԿ «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ», Երևան, էջ 3, 2020թ.
3. ՀՀ ԱՎԿ «Պարենային ապահովումը և աղքատությունը հովար-դեկտեմբերին», 2020
4. «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1113>
5. Ռազմավարություն ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների, <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>
6. Սամվել Ավետիսյան, Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները: Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014, էջ 16:
7. Менделеев Д.И. Заветные мысли. М.: Мысль, 1995. с. 39.
8. Продовольственные потери и органические отходы на потребительском рынке Российской федерации: Московская школа управления «Сколково» центр развития потребительского рынка; Москва 2019 г.
9. ФАО, «Техническая платформа по измерению и сокращению продовольственных потерь и пищевых отходов», <http://www.fao.org/platform-food-loss-waste/ru/>.
10. [https://finport.am/full\\_news.php?id=43993&lang=2](https://finport.am/full_news.php?id=43993&lang=2)
11. <https://tinyurl.com/4yyjnt8k>
12. <https://varlamov.ru/3431550.html>
13. [https://ru.qaz.wiki/wiki/Urban\\_agriculture](https://ru.qaz.wiki/wiki/Urban_agriculture)
14. [https://www.armstat.am/file/article/29\\_gt\\_2019.pdf](https://www.armstat.am/file/article/29_gt_2019.pdf)
15. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=99182>
16. <http://un.am/hy/news/829>
17. <http://makingsense.rbc.ru/sdgs>
18. <https://www.dw.com/ru/%D>
19. <https://tinyurl.com/mnua28zz>
20. <https://tinyurl.com/5bsdy64r>

21. <https://tass.ru/ekonomika/9699479>
22. <https://tinyurl.com/mr459a8p>
23. <https://www.gazeta.ru/business/2020/04/16/13050379.shtml>
24. <https://tinyurl.com/yvnewzzb>
25. <https://tinyurl.com/4bw7fsp7>
26. <https://ru.tradingeconomics.com/country-list/food-inflation>
27. <http://www.fao.org/worldfoodsituation/foodpricesindex/ru/>
28. <https://news.un.org/ru/story/2021/05/1402482>
29. <https://tinyurl.com/2p9jd7ff>

**ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» հեղափոխական կենտրոնի ավագ փորձագետ, պրոֆեսոր**

**ՍԵՐԳԵՅ ՄԵԼՈՅԱՆ**

**ՀԱԱՀ, Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի դոցենտ**

**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

Սույն հոդվածում ներկայացվում է ՀՀ-ում պարենային անվտանգության ներկա վիճակի վերլուծությունը, բացահայտվում առկա հիմնախնդիրները, շեշտադրվում դրանց պատճառները և ազդեցությունը բնակչության պարենային բավարարման վրա:

Երկրի ազգային անվտանգության առանցքային խնդիրներից մեկը բնակչության պարենային անվտանգության ապահովումն է: Ներկա իրավիճակում Հայաստանում պարենային ապրանքների սուր արտահայտված պակասորդ չկա: Սակայն այս հիմնախնդիրը նպատակահարմար է դիտարկել երկարաժամկետ կտրվածքով, որովհետև պարենային ապրանքների պահանջարկի հարաբերական կայունության պայմաններում, առաջարկի վրա ազդող գործոնները բացասական առումով առավել ազդեցիկ են դառնում: Իսկ, քանի որ պարենային ապրանքներ մատակարարող հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն է և պակասը լրացվում է դրսից ներկրումների հաշվին, միանգամից ի հայտ են գալիս երեք կարևոր հիմնախնդիրներ՝ գյուղատնտեսության կայուն զարգացման ռիսկերը, համաշխարհային շուկայում պարենի մատչելիությունը և տարածաշրջանում լոգիստիկ համակարգի, հատկապես՝ հաղորդակցության ուղիների ռիսկերի չեզոքացումը:

Սույն հոդվածում դիտարկվում է պարենի և սննդային հումքի համաշխարհային գների բարձրացման միտումները, դրանց հիմնական պատճառներն ու Հայաստանի տնտեսության վրա ներգործությունը: Միաժամանակ, շեշտադրվում է նորարարական

գյուղատնտեսության և պարենային ինքնաբավության բարձրացման կարևորությունը՝ համավարակին և այլ վտանգավոր երևույթներին դիմակայելու համար:

Հոդվածում դիտարկվում է նաև 44-օրյա պատերազմից հետո Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի պարենային ապահովության նոր մարտահրավերները, երկրի պարենային անվտանգության վրա կլիմայի փոփոխության և COVID-19 համավարակի ազդեցության հարցերը:

## **ВОПРОСЫ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

***САМВЕЛ АВETИСЯН***

***АГЭУ, Исследовательский центр "АМБЕРД" Старший эксперт, профессор***

***СЕРГЕЙ МЕЛОЯН***

***НАУА, доцент кафедры аграрной экономики***

### **АННОТАЦИЯ**

В данной статье представлен анализ текущего состояния продовольственной безопасности в Республике Армения, выявлены существующие проблемы, выделены их причины, а также их влияние на удовлетворенность населения продовольствием.

Одним из ключевых вопросов национальной безопасности страны является обеспечение продовольственной безопасности населения. В нынешней ситуации в Армении нет острого дефицита продуктов питания. Однако целесообразно рассмотреть этот вопрос в долгосрочной перспективе, поскольку в условиях относительной стабильности спроса на продукты питания, факторы, влияющие на предложение, в негативном аспекте становятся более влиятельными. А поскольку основным источником продовольствия является сельское хозяйство, и дефицит дополняется импортом из-за границы, сразу возникают три важных вопроса: риски устойчивого развития сельского хозяйства, наличие продуктов питания на мировом рынке и нейтрализация рисков логистических систем в регионе, особенно коммуникационных.

В данной статье рассматриваются тенденции роста мировых цен на продукты питания и сырье, их основные причины и влияние на экономику Армении. Одновременно подчеркивается важность инновационного сельского хозяйства и повышения продовольственной самообеспеченности в целях противодействия пандемии и других опасных событий.

В статье также обсуждаются новые вызовы продовольственной безопасности в Армении и Нагорном Карабахе после 44-дневной войны, вопросы влияния изменения климата и пандемии COVID-19 на продовольственную безопасность страны.

## FOOD SECURITY ISSUES IN THE REPUBLIC OF ARMENIA

**SAMVEL AVETISYAN**

*ASUE "AMBERD" Research Center, Senior Expert, Professor*

**SERGEY MELOYAN**

*ANAU, Chair of Agrarian Economics, Associate Professor*

### ABSTRACT

This article presents the analysis of the current state of food security in the Republic of Armenia, reveals the existing problems, emphasizes their causes and the impact on the food satisfaction of the population.

One of the key issues of the country's national security is ensuring the food security of the population. At present, there is no acute shortage of food products in Armenia. However, it is advisable to consider this issue in the long run, because in the conditions of relative stability of food demand, the factors affecting the supply become more influential in a negative way. And since the main source of food supply is agriculture, and the shortage is filled by imports from abroad, three important issues arise at once: the risks of sustainable agricultural development, the availability of food in the world market and the neutralization of risks of logistics system in the region, especially the risks of communication channels.

This article discusses the tendencies of rising world prices for food and raw materials, their main reasons and the impact on the Armenian economy. At the same time, the importance of innovative agriculture and increase of food self-sufficiency is emphasized in order to fight the epidemic and other dangerous phenomena.



The article also discusses the new food security challenges in Armenia and Nagorno-Kharabakh after the 44-day war, the impact of climate change and the COVID-19 pandemic on the country's food security.